

## Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի 2016 թվականի հունվար ամսվա կատարված աշխատանքների

Հունվար ամսին պահպանության բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 9 ծառ, որոնց համար կազմվել է 5 անտառոխախտման արձանագրություն և ուղարկվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Տեղական լրատվական միջոցներով ազգաբնակչությանը պարբերաբար տեղեկացվել է <<Դիլիջան>> ազգային պարկի ռեժիմի, բնապահպանական խնդիրների հիմնական դրույթների մասին:

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում իրականացվել է ձնծաղիկ միրզոնայի բուսատեսակի ծաղկման, թվաքանակի ուսումնասիրություն և չորացման նպատակով առանձնյակների հավաքում:

Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի կողմից Էկոտուրիզմի գովազդման նպատակով այցելություններ են կատարվել Դիլիջան քաղաքում գործող <<Մուշ>> և <<Դիլիժանս>> հանգստյան տներ, ինչպես նաև մի շարք հյուրատներ: Ներկայացվել են <<Դիլիջան>> ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները, տրամադրվել են տեղեկատվական նյութեր՝ գրքույկներ, բուկլետներ:

Կազմվել և ՀՀ բնապահպանության նախարարություն հաստատման է ուղարկվել կազմակերպության գնումների պլանի նախագիծը , նախապատրաստվել է 2015 թվականի ամփոփ հաշվետվությունը: